Ուրեմն ներեցէք ինձ ասել Ձեզ մի քանի խօսք, ամենևին անզարդ և անպաճոյճ, բայց առ ի սրտէ, մի քանի խօսք յանուն Ներսիսեան դպրոցի պատուելի Հոգաբարձուների, յանուն նորա մէջ աշխատաւորների, յանուն իմ, որ Ձերում վեհագոյն հաւանութեամբ կոչուած եմ սպասաւորել Հայկազեան մանուկների կրթութեանը և դաստիարակութեանը Վրաստանիս մայրաքաղաքում։

Ներսիսեան դպրոցի Հոգաբարձուքը, նորա ուսուցիչ պաշտօնակատարքը և ես առ ի սրտէ շնորհաւորելով Ձեր սուրբ օծման այս երրորդ տարեդարձը, մաղթումենք Ձեզ ի վերուստ երկար և երջանիկ օրեր, կեանքի արկածներից անփորձ և անխռով օրեր, անդորրութիւն մտքի, պայծառութիւն հոգւոյ, անբեկանելի արիութիւն Կամքի։ Ո՛չ փոքրիկ են մեր յոյսերը Քեզանից, Դու մեծ Քահանայ, ո՛չ փոքրիկ մեր արդարացի ակնկալութիւնքը. բայց մեք քաջահաւատ եմք և վստահ միանգամայն, որ Դու, մեր նախնի վեհագոյն Գըլուխդ, քոյին խորին իմացականութեամբ և շրջահայեաց տեսութեամբ կը հասկանաս այս մեր խորհրդաւոր ժամանակի և այժմեան հայկազեան սերունդի բազմամասնեայ պէտքերը, կը լինիս պաշտպանը և նախահայր Հայկազեան լուսաւորութեան, երկրորդ Սահակ պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտութեան, ուսումնականների։ Մեք քաջահաւատ ենք, որ Վրաստանիս մայրաքաղաքի մէջ եղած Ներսիսեան դպրոցը Ձեր Վեհափառութեան կարող և իմաստուն հովանաւորութեան ներքոյ կ'աճէ, կզօրանայ, կը ծաղկի և կը պտղաբերէ կեանքի գործեր. Մեք քաջահաւատ ենք, որ գալոց օրերում Հայկազեան սերունդը կը պատմէ իւր զաւակներին. Ներսէս հինգերորդը տնկեց և սերմանեց, բայց Գէորգ չորրորդը ջուր ետ, իսկ Աստուած աճեցոյց։

Կեցցե՛ս դու, Վեհագոյն գլուխդ մեր, կեցցես բարօրութեամբ վասն բարօրութեան քո՛ և զքեզ սիրող և մեծարող ազգի, որոյ աչքը և հոգիքը և սրտերը դարձուցած են առ Քեզ և ի վերայ քո։

Ս. Նազարեանց։

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ԻՇԽԱՆԻ ԿՏԱԿԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ.

Ո՛չ սակաւ ուրախութեամբ հանդերձ խորին շնորհակալութեամբք կը փութամք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց, զի անցեալ մայիս ամսոյ մէջ հանգուցեալ արժանայիշատակ և անմահ բարեբար Ղահրաման Արղութեանց իշխանի կտակակատարք ամենայն սիրով կատարած են նոյն բարերարին կամքը, որ Աղէքսանդրապօլ քաղաքի մէջ Ազգային աղքատիկ օրիորդաց Ուսումնարան հաստատելոյ և կառավարելոյ համար 40 հազար ռուբլի կտակած և նուիրած է. ուստի և արժանացան ընդունիլ 'ի Վեհ. Կաթողիկոսէ օրհնութեան և գոհունակութեան Կոնդակ։

Նոյնպէս Կոնդակաւ Նորին Ս. Օծութեան Հոգաբարձութիւն ևս հաստատուած է նոյն ուսումնարանի համար. հետևաբար այսուհետև անհրաժեշտ պարտք կը մնայ նոյն Հոգաբարձութեան, ուսումնարանի շինութեան և կառավարութեան միջոցներուն պէտք եղած կարգադրութեանց կատարումը, և անմահ բարերարին Ազգօգուտ և բարենախանձ նպատակին իրագործութիւնը և արդիւնաւորութիւնը՝ Ազգիս ապագային համար [illegible] [illegible] զարգացնելով։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ ՏՓԽԻՍԱՑ.

Ամսոյս 1-ին Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեցաւ երթալ յայցելութիւն Ներսիսեան Ազգ.—Հոգևոր Ուսումնարանին Հայոց Տփխիսայ։

Ի ներկայութեան Նորին Ս. Օծութեան՝ Կրօնական գիտութեանց և Ազգային պատմութեան և այլոց քննութիւնք եղան։ Այս առթիւ Տեսուչ Մեծ. Ստեփան Նազարեանց՝ ընթերցաւ մի ճառ։ Իսկ ապա Նորին Ս. Օծութիւնն մի համառօտ յորդոր ուղղեց Մեծ. Հոգաբարձուաց, Տեսչին, դասատուաց և աշակերտաց. և օրհնեց զամենեսեան և վերադարձաւ 'ի Վեհարանն։

Ահաւասիկ նոյն ճառը։